



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017 թվականի թիվ 148-Լ որոշմամբ հաստատված «Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի» (**այսուհետ նաև՝ Ծրագիր**) 7-ից 11 կետերի պահանջներով,

Հիմք ընդունելով Փաստաբանների պալատում երիտասարդ փաստաբանների անվճար օգտագործմանը հատկացված աշխատասենյակից (**այսուհետ նաև՝ Աշխատասենյակ**) օգտվելու հայտերի ընդունման և քննարկման ժամանակահատվածը սահմանելու, ինչպես նաև հարակից հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2026 թվականի հունվար-հունիս ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ:

2. Սահմանել, որ՝

2.1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am կամ youthboard@advocates.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև առձեռն՝ ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում, հայտերի ընդունման ժամանակահատվածում ներառված յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

10 դեկտեմբերի 2025թ.

թիվ 05-Լ

ք. Երևան

2.2) Հարցազրույցն անց է կացվելու ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում կամ առցանց՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 12:00-ից սկսած՝ հավակնորդների հետ նախապես համաձայնեցված ժամին և եղանակով:

2.3) Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե հասցեատերը փոստային առաքանին փաստացի ստանա 2025 թվականի դեկտեմբերի 25-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի
նախագահ՝ Արև Հարությունյան

